

**Գործադիրի յայտարարությունը: Զինադադարի և հրադադարի
անհրաժեշտությունը Ատհայի տոնին առթիւ**

Ժողովրդավարական Փոփոխութեան Ուժերու Ազգային Համակարգող Մարմին

Յայտարարութիւն

Այլ տօն մըն ալ կ'անցնի Սուրիոյ մէջ և ան կը մտնէ շատ վտանգաւոր նոր հանգրուան մը իր պատմութեան մէջ, սկսաւ ԱՄՆ-ու կազմած միջազգային դաշնակից ուժերու օդային հարուածներով, և չ'աւարտեց Թուրքիոյ նախագահի յայտարարութեան հետ թէ իր պետութիւնը կը նպատակադրէ ցամաքային ռազմական միջամտութիւն Սուրիոյ հողերէն ներս: Այլ տօն մըն ալ կ'անցնի և ահաբեկիչներու նախիրները կ'արշաւեն Սուրիոյ սիրեցեալ շրջանները, ուր Այն Արապ (Քոպանի) կը շարունակէ ցեղասպանութեան վտանգներու կամ բռնի տեղահանումի իր դիմակալութիւնը եթէ քաղաքական լուծումի աջակից բոլոր ջոկատները չի միացնեն իրենց ջանքերը հակազդելու ահաբեկչութեան վտանգը և արգիլել Թուրքիոյ ցամաքային միջամտութիւնը, որ պիտի ունենայ աղիտալի հետեւանքներ Սուրիոյ ապագային համար:

Ազգային Համակարգող Մարմինը իր հիմնադրութիւնէն ի վեր չի դադրեցաւ քաղաքական ու մարդասիրական նախաձեռնութիւններ ձեռնարկել, որ կը նպատակադրէ դադրեցնել արհինահեղութիւնը և իրականացնել ժողովրդավարական խաղաղ անցում իշխանութեան, սակայն զէնքի ձայնը բարձրացաւ բոլոր ձայներուն վրայ և երկիրը մտաւ կործանիչ զինեալ հակամարտութեան մէջ, ուր կը շարունակուի քաղաքական իշխանութեան պնդութիւնը և միջազգային կամքի բացակայութիւնը յաջողցնելու քաղաքական նախաձեռնութիւնը, որ կը ներկայացուի Ժընեւի յայտարարութեամբ:

Ատհայի տօնի առթիւ, Ազգային Համակարգող մարմնի գործադիրի գրասենեակը կոչ կ'ուղղէ զինադադարի մարդասիրական դադրեցումի Սուրիացիներուն միջեւ տօնի օրերուն ընթացքին, և կը հաստատէ իր հանդիպումը "Մեր ժողովուրդին ապահովութեան համար երկարեցէք ձեռք մը, զինադադարի համար Սուրիոյ մէջ" նախաձեռնութեան հետ, որը ձեռնարկեց կրօնական ու ընդդիմադիր անձնաւորութիւններ, և կը հրաւիրէ բոլոր ռազմական ու քաղաքական ուժերը աջակցելու և պարտաւորուելու զինադադարին, նուազեցնելու համար Սուրիոյ ժողովուրդին տառապանքը և իրեն քիչ մը յոյս տալ:

Դամասկոս 1/10/2014

Գործադիրի գրասենեակ